

Ամենապատիւ Տեղակալ Տ. Գէորգ Արքեպիսկոպոսի
 տնօրէնութեամբ Մայր Տաճարում, խառն ժամաւորների
 ներկայութեամբ, ս. պատարագից յետոյ հանդիսաւոր հո-
 գեհանդիստ կատարուեց նախարարների խորհրդի նախա-
 դահ և ներքին գործերի նախարար Պ. Ա. Ստոլիպինի հա-
 մար:

Կ Ո Չ

Հայ մանուկ անդաստանի անխոնջ մշակը—հայ ուսուցիչը
 և հայ մտքի դարդացման առաջապահ զինուորը—հայ գրողը՝
 անապահով զինակի են դատապարտուած:

Հայ հասարակութեան նուիրուած, այդ կարգի անձնա-
 զոհ մշակների շարքաշ աշխատանքը ոչ միայն չէ դնահատ-
 ւում և արժանի կերպով վարձատրւում, այլ դառն անար-
 քերութեան և խուլ մոռացութեան մատնւում:

Հայ ուսուցչութեան և դրողների կեանքի անապահովու-
 թիւնը տուել է մեզ նահատակների և անձնուրաց մարտիրոս-
 ների մի երկար շարան, որոնք մոռացած իրանց անձնական
 քարերը, հանգստութիւնն ու ապահով ապագան, նուիրուել
 են հասարակական կարիքներին, առանց մտածելու անգամ,
 որ կեանքի արեւաւաքին իրանց սպասում է ուժասպառու-
 թիւն, հիւանդութիւն և վաղաժամ մահ, որոնց դէմ կռուե-
 լու համար անկարող են եղել սե կողէի անգամ տնտեսել,
 իրենց քայքայուած ուժերը վերականգնելու, մաշող ցաւե-
 րից ապաքինելու:

Վերոյիշեալները ի նկատի ունենալով՝ Առիկասի Հայոց
 Բարեգործական Ընկերութեան Աեաաիգորսի ճիւղի վարչու-
 թիւնը, անցեալ տարուայ իւր նիստերից մէկում՝ որոշեց այդ
 կարեւոր բայքը քայնել նախաձեռնութիւն յանձն առնելով՝
 կոլիասեան հանքաջրային կենտրոնում—Աեաաիգորսի քաղա-
 քում հիմնել մի բուժարան հանրակացարան (sanatoria) Մա-
 շուկ լերան ստորոտում, ուր թուլակաղմ, ուժասպառ հայ
 ուսուցչութիւնը և ընդհանրապէս հայ մտքի ու գրչի աշխա-
 տաւորները միջոց ունենան արժան և ձրի վերականգնել իրենց
 կորցրած առողջութիւնը, ամարային արձակուրդներին ունե-
 նալով թարմ օդ, սննդարար կերակուր, առողջապահական
 պայմաններին յարմարեցրած բնակարան և ձրի բժշկական մի-
 ջոցներ:

Վարչութիւնս անկարող է սահայն, իր միջոցների սղութեան պատճառով, մի այդպիսի մեծագումար ձեռնարկութիւնը իւր մասնաւոր ոյժերով օր առաջ իրագործել, ուստի իւր ներկայ գրութեամբ ԿՈՉ է անուամ հայ ժողովրդի ամեն խաւերին, օգնութեան գալ իրան, իւր սկսած, բայց ոյժերից վեր, արդէն հասունացած, անհրաժեշտ ու վեհ գործի իրագործման:

Յիրաւի հայ հասարակութեան քանկմաց, ինտելիգենտ և ապահով մասին է մնում, ուշադիր վերաբերմունք ցոյց տալ դէպի այդ շարատանջ մշակները, բուն պատրաստակամութեամբ արձագանք տալ նրա ստիպողական կարիքներին և միջոցներ մատակարարել նախ՝ վաղաժամ մահուան ճիրաններից խլելու մեր թանգ զոհերը և երկրորդ՝ քաջալերելու մեր մտքի յառաջամարտիկներին այն գիտակցութեամբ, թէ հայ ժողովրդի մէջ իրանք ևս ունեն անկեղծ բարեկամներ, որոնք գիտեն ըստ արժանւոյն գնահատել դադափարական գործի անխոնջ մշակներին:

Եւ այդպէս մենք գործի ուղիքն ենք դնում: Մենք գծագրում ենք ուղին. թող այժմ գիտակից հայ հասարակութիւնը օգնութեան գայ մեզ և չխնայէ իւր լիառատ օգնութիւնը համարկելի գործին: Բաւական է որքան պարծեցանք խնկելի շիրմներ աւլով, պարծենանք այժմ կենդանի գործի յաւերժ արձաններ կանգնեցնելով:

Կովկասի Հայոց բարեգործական
բնիւրօրեան Պետիկօրսկի վարչօրիւն

Ստացուած գրքեր

Ա. Յայտնութիւն Յովհաննու, հին հայ թարգմանութեամբ, զառաջին անգամ ի լոյս ըստ երկուց ձեռագիր օրինակաց համեմատութեամբ յունական բնագրին և թարգմանութեան ներսիսի Լամբրոնացոյ հանդերձ ներածութեամբ և ծանօթութեամբը Ֆրէտէրիք Մուրատ տիւրք 2.—ժր. ներածութիւն. Եւթն լուսատիպ տախտակօք հանդերձ:

Երուսաղէմ, ի տպարանի Առաքելական Աթոռոյ Ա. Յարկովբեանց 1911 թ.

Բ. ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԵԿՍՈՒ. մասն առաջին. երկրագործութիւն, Խոտաբուծութիւն, Պարտիզպանութիւն, Անասնապահութիւն, (Կաթնատնտեսութիւն) և Մեղուաբուծութիւն: